

Թիւ 27618  
Յունուար 26, 1982

Մեծայարգ  
Տիար ժողէֆ Շանլեան  
Թորոնթօ.

Յարգելի Տիար Շանլեան,

Այսու զիրով մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք ձեզի եւ Տիար Յակոբ Երէցեանի, ինչպէս նաեւ ձեր ատենապետութեամբ կազմուած Կարգադիր Յանձնախումբի անդամներուն՝ Չորեքշաբթի Յունուար 6-ի ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՀԱԽԱՔՈՑԹԻ արձանագրած բացառիկ յաջողութեան համար:

Ուրախութեամբ կը հաստատենք որ Կարգադիր Յանձնախումբիդ յանձն առած զոհողութիւնները տուին ակնկալուած արդիւնքը, եւ մօտ 850 հայ մանուկներ քով քովի զաւով, թէ՛ Սկեդեցւոյ եւ թէ՛ սօնականօրէն զարդարուած սրահին մէջ, հաղորդուեցան Ս. ծննդեան ոգիով եւ միասնաբար դիմաւորեցին նոր Տարին՝ խանդավառ միջնորդի մը մէջ:

Մեզի համար հոգեկան համոյքի առիթ մը եղաւ շրջապատուիլ հայ մանուկներով եւ պա՛ մը մանկանալ անոնց հետ: Ուրախ ենք որ յայտազիր ընթացաւ կանոնաւոր կերպով՝ համաձայն ծրագրին:

Հանեցէք զնահատանի մեր զգացումները փոխանցել բոլոր անոնց՝ որոնք իրենց ժամանակն ու կարողութիւնը ի սպաս դրին այս սօնակատարութեան յաջողութեան համար:

Կ'աղօթենք որ Տէրը բոլոր հայ մանուկները պահէ անփորձ եւ անվտանգ եւ իր օրհնութիւնները անպակաս ընէ անոնց վրայէն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ